

Биол. журн. Армении, 1-2 (59), 2007

УДК 619:616.5:636.22/.28

ՏԱՎԱՐԻ ՀԻՊՈԴԵՐՄԱՏՈԶԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՆՈՐ ԵՂԱՆԱԿ

Յ.Զ. ՆԱՐԱՇՅԱՆ, Ս.Ա. ՄԽԻԹԱՐՅԱՆ

Հայաստանի պետական ագրարային համալսարան, Երևան, 0009

The pieces of leather 10 x 1.5 cm barked and soaked by the 60% emulsion of neocidole, have been sewed in the basic part of the tail since the start of gadfly flight till its finish to prevent the cattle hypodermatosis. It prevents the oviposition of mature female gadflies and appearance of hypodermatosis in calves.

Հիպոդերմատոզ - տավար - բոռ - թրթուր

Հայաստանում և հարևան երկրներում մեծ տարածում ունի ենթամաշկային բոռի թրթուրներից հարուցվող հիպոդերմատոզ հիվանդությունը:

Հիպոդերմատոզը խրոնիկական հիվանդություն է, որը արտահայտվում է հարուցիչի թրթուրների տեղակայման վայրերում առաջացող բորբոքային երևույթներով, օրգանիզմի ընդհանուր թունավորման և մթերատվության անկման նշաններով: Հայտնի է, որ հիպոդերմատոզով հիվանդ կովերի մոտ կաթի կորուստը տարեկան կազմում է 90-200 կգ, մսինը՝ 13-18 կգ, իսկ կաշեհումքինը՝ 8% [1-3]: Հիվանդությունը հարուցվում է ենթամաշկային բոռի երկու տեսակների *Hypoderma bovis* (սովորական բոռ) և *H. lineatum* (կերակրափողային բոռ) թրթուրների կողմից:

Կանխարգելիչ համալիր միջոցառումների բացակայության հետևանքով հիվանդությունը տարեց-տարի ոչ միայն կրկնվում է միևնույն տարածքներում, այլև ընդարձակում է իր ընդգրկման տարածքները:

Հիպոդերմատոզը կանխարգելման նպատակով աշխարհում, այդ թվում նաև Հայաստանի ողող ֆերմերային տնտեսություններում, օգտագործում են սիստեմային պրեպարատներ, որոնց ազդեցությունը հիմնականում ուղղված է բոռի առաջին աստիճանի թրթուրների դեմ: Այս նպատակով օգտագործվում են քլորոֆոս, հիպոդերմին քլորոֆոս, նեգովոն, դիդեսաֆոս ֆոսֆորօրգանական պատրաստուկները: Այս պատրաստուկների բացասական ազդեցությունը կայանում է նրանում, որ նրանք ընդունակ են օրգանիզմում կուտակվելու և հետագայում կաթով արտազատվելու հատկությամբ: Հետևաբար, 1997թ Ուսաստանի Դաշնության Առողջապահության նախարարության կողմից դրանց օգտագործումը արգելվել է: Հայաստանում թվարկված պատրաստուկներից ներկրվում է միայն քլորոֆոսը:

Ներկայումս աշխարհում մեծ տարածում են ստացել ազդման լայն շրջանակով օժտված հակամակաբուծային՝ ավերմեկտինի հիմքի վրա պատրաստվող պատրաստուկները [4, 5]: Ուսաստանի Դաշնությունում լայն տարածում են ստացել ավերմեկտ, ավերտին և ռուստոմեկտին պատրաստուկները: Հատկապես նշում ենք ռուսական արտադրության պատրաստուկների մասին,

քանի որ մակաբույծների նկատմամբ օգտագործվող և գրանցված համարյա բոլոր պատրաստուկները Հայաստան ներկրվում են միայն Ռուսաստանից:

Թեև վերը նշված պատրաստուկներն օժտված են լավ հակաբոցային հատկությամբ, սակայն դրանք Հայաստանի ֆերմերային տնտեսություններում լայն կիրառում չեն ստացել միայն այն պատճառով, որ դրանցով կենդանիների մշակումն աշխատատար է (մշակումները կատարում են բուծերի թռչնի ընթացքում մի քանի անգամ) և այդ պատրաստուկների օգտագործման հրահանգում նշված է, որ նրանք կովի կաթով արտազատվում են մշակումից հետո 4-6 շաբաթվա ընթացքում և դրանց մնացորդային քանակները երկար ժամանակ հայտնաբերվում են նաև մսեղիքում:

Վերջին տարիների ընթացքում տնային կենդանիների մոտ մակաբուծվող միջատների նկատմամբ հաջողությամբ կիրառվում են միջատասպան նյութեր՝ պարունակող վզկապները: Հիմք ընդունելով այդ վզկապների արդյունավետությունը, մեր կողմից փորձ կատարվեց ինպոդերմատոզի նկատմամբ կիրառել միջատասպան կամ միջատներին վանող նյութեր պարունակող կաշվի շերտեր:

Աշխատանքի նպատակն էր մշակել և արտադրության մեջ ներդրման նպատակով առաջարկել տավարի հիպոդերմատոզի կանխարգելման մոր եղանակ:

Նյութ և մեթոդ: Հետազոտությունները կատարվել են 2005-2006 թթ. Արագածոտնի մարզի Ավան գյուղի ֆերմերային տնտեսություններում: Այս և տարածաշրջանի այլ տնտեսություններում տավարի հիպոդերմատոզը յուրաքանչյուր տարի զգալի վնաս է պատճառում ֆերմերներին: Հետևաբար, հիպոդերմատոզը կանխարգելելու նպատակով մենք փորձեցինք միջատասպան նյութերով մշակված կաշվե կտորները ամրացնել ոչ թե կենդանիների պարանոցին, ինչպես դա արվում է շների և կատուների մոտ, այլ պոչի հիմքին, քանի որ ենթամաշկային բուռն ծվերն ամրացնում է տավարի պոչի հատվածի և ազդերի հետին մակերեսի մազերին:

Որպես միջատասպան նյութ ընտրվեց մեծ քանակներով ներկրվող և բարձր միջատասպան արդյունավետությամբ օժտված ճեղքիղով պատրաստուկը: Կենդանիներին մշակելուց առաջ հաշվի է առնվել, թե այդ տարածաշրջանում, կախված կլիմայական պայմաններից, երբ է սկսվում և ավարտվում բուծերի թռչնը: Հիպոդերմատոզի նկատմամբ, դեռևս խորհրդային տարիներից գործող կանխարգելիչ միջոցառումների հրահանգում, տավարին միջատասպան և միջատներին վանող պատրաստուկներով առաջարկվում էր մշակել զարմանք՝ երրորդ աստիճանի բորբոքների կենդանիների մաշկից դուրս գալու և աշնանը առաջին աստիճանի թրթուրների կենդանիների մաշկի տակ ներդրվելու ժամանակ, իհարկե, միջատներին վանող պատրաստուկներով հարկադիր մշակումներ կատարվում էր ողջ արոտային պահվածքի ընթացքում:

Հիպոդերմատոզը կանխարգելման նպատակով փորձերը կատարվել են մույն տարում ծնված հորթերի վրա, որոնք նախօրոք բաժանվել են 4 խմբի, յուրաքանչյուրում 10 կենդանի:

1 խմբի կենդանիները մշակվել են հետևյալ կարգով. տավարի դաբաղած կաշվի 10 սմ երկարությամբ և 1,5 սմ լայնությամբ կտորները նախօրոք 15 օր տևողությամբ պահվել են ճեղքիղով պատրաստուկի 60%-անոց, 50մլ յուղային լուծույթում, այնուհետև կաշվի կտորները լուծույթից հանվել և սենյակային ջերմաստիճանի պայմաններում չորացվել են: Հուլիսի սկզբին (բուծերի թռչնի սկզբին) մույն տարում ծնված հորթերի պոչի հիմքին մաշկին կարվել են 10սմ երկարությամբ և 1,5սմ լայնությամբ ճեղքիղով 60%-անոց յուղային լուծույթով ներծծված կտորները և բոլոր միներ, հոկտեմբերի վերջը, այսինքն տվյալ տարածաշրջանին բնորոշ բուծերի թռչնի ավարտը, երկրորդ խմբի կենդանիներին արոտային շրջանի սկզբին և ողջ արոտային շրջանում 20 օրը մեկ կատարվել է ցողարկում քլորոֆոսի 1%-անոց ջրային լուծույթով յուրաքանչյուր գլխի համար ծախսելով 16մլ լուծույթ:

Երրորդ խմբի կենդանիներին նախորդին նմանափա կատարվել է ցողարկում, սակայն տիգուլոն-10 պատրաստուկի լուծույթով, երկնվազ, 28-30 օր ընդմիջումով յուրաքանչյուր գլխի համար ծախսելով 12մլ լուծույթ:

Չորրորդ (ստուգիչ) խմբում ընդգրկված էին մույն հասակի կենդանիներ, սակայն նրանց միջատասպան ոչ մի պատրաստուկներով չեն մշակվել:

Արդյունքները և քննարկում: Չորս խմբերին պատկանող կենդանիներին

հաջորդ տարվա զարմանը մարտ-հունիս ամիսներին, հիպոդերմատոզի խլվակների հետազոտելիս ստացվեց հետևյալ պատկերը, որի արդյունքները բերված են աղյուսակ 1-ում:

Ինչպես երևում է ներկայացված աղյուսակի թվային պատկերից, հաջորդ տարի

Աղյուսակ 1. Հայտնի և առաջարկվող եղանակներով մշակված հորթերի մաշկում հայտնաբերված հիպոդերմատոզի հարուցիչի խլվակների քանակները $M \pm m$, $n=10$

Կենդանիների խմբերը	Չարմանը մաշկում հայտնաբերված խլվակների քանակները
Առաջին	0
Երկրորդ	4.4 ± 0.31
Երրորդ	3.2 ± 0.20
Ստուգիչ	9.7 ± 0.41

Ծանոթություն՝ $p < 0.01$

զարմանը կենդանիներին ստուգելիս առաջին խմբի կենդանիների մաշկի վրա հիպոդերմատոզի հարուցիչի երրորդ աստիճանի թրթուրների խլվակներ չեն հայտնաբերվել: Երկրորդ խմբի կենդանիների մոտ խլվակների քանակը համեմատած ստուգիչ խմբի կենդանիների՝ կազմում էր 45.4%, իսկ երրորդինը 33%:

Այսպիսով, նեոցիդոլի 60% լուղային լուծույթի մեջ պահված կաշվե կտորների օգտագործումը, ի տարբերություն անասնաբուժության մեջ ավանդաբար օգտագործվող պատրաստուկների քլորոֆոս և մշակման ձևերի ցողարկում կամ լողացում, արդյունավետ է ու քիչ աշխատատար և, որ ամենակարևորն է, առաջարկվող եղանակը հնարավորություն է տալիս տնտեսությունները մի քանի տարիների ընթացքում լիովին ազատել հիպոդերմատոզի հիվանդության հարուցիչներից:

Անհրաժեշտ է ընդգծել, որ բացի բոռերին վանելու հատկությունից, մեր կողմից փորձարկված եղանակով կենդանիներին մշակելու դեպքում նրանց վրա չէին բարձրանում անասնաբուժության համար չարիք հանդիսացող արոտավայրային տզերը:

Առաջարկվող եղանակի համար ստացվել է արտոնագիր:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Նաղաշյան Հ.Չ. Սակաբուծաբանություն և կենդանիների ինվազիոն հիվանդություններ. Երևան, «ՍՍՐՎՍՐԴ հրատարակչություն», 322-326, 2003:
2. Непоклонов А. Животноводство России. 6, 5, 78-81, 2000.
3. Окунев А.М. Сб.науч.тр.ВНИИВЭА. 36, 89-92, 1994/1995.
4. Oksanen A., Nieminen M. Acta Vet Scand. 4, 39, 483-9, 1998.
5. Riha J., Minar J., Matouskova O. Therapy of hypodermiyciasis in heifers from the economic point of view. Vet Med (Praha). Apr; 22 (4), 193-200, 1977.

Поступила 05.III.2007